ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 33-Ա
23 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թ.
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍՅՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԻՑ 0,0547 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ «ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, համաձայն Կապան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն համարվող հողամասերն ուղղակի կառուցապատման և /կամ/ վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու վարձավճար սահմանելու մասին» թիվ 81-Ն որոշումների, հաշվի առնելով «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության /գլխ. տնօրեն Դ.Ուշկով/ 2018 թվականի փետրվարի 09-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, *համայնքի ավագանին որոշում է.*

1.Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Սյունիք բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նշանակության այլ հողերից 0,0547 հա հողամասը /ծածկագիր 09-082-0514-0002/ սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ 25 /քսանհինգ/ տարի ժամկետով տրամադրել «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությանը, տարեկան վարձավճար սահմանելով 13590,0 /տասներեք հազար հինգ հարյուր իննսուն/ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենադրությամբ սահմանված կարգով:

Կողմ (8)՝

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ — ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ — ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ — ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ — ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018թ փետրվարի 27
ք. Կապան